չունեցող մասնակիցների ցուցակում, տվյալ դեպքում հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԱԳԱՍՏ» ՍՊ ընկերության կողմից էականորեն խախտվել են 10.01.2024 թվականին կնքված «ՍՄԿԿ-ԳՀԱՊՁԲ-14/02.12» ծածկագրով պետական գնման պայմանագրով նախատեսված Պատվիրատուից պատվերը ստանալուց հետո ապրանքի մատակարարման 5 աշխատանքային օրվա ժամկետը, ուստի Դատարան գալիս է այն եզրահանգման այն մասին, որ «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության տնօրեն Ա.Բաբայանի «Ագաստ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 30.05.2024 թվականի թիվ 05/248 որոշումը իրավաչափ է և ենթակա չէ անվավեր ճանաչման:

Վերը շարադրվածի արդյունքում դատարանը գալիս է եզրահանգման, այն մասին, որ պատասխանողի կողմից ապացուցվել են վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերը, հետևաբար նման պայմաններում հայցը ենթակա է մերժման:

**6. Դատական ծախսերը.**

*Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին՝ դատարանն արձանագրում է հետևյալը.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Նկատի ունենալով, որ հայցվորը հայցադիմումը դատարան ներկայացնելիս վճարել է օրենքով նախատեսված պետական տուրքի գումարը, իսկ հայցը ենթակա է մերժման, ուստի Դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

**Վ Ճ Ռ Ե Ց**

**1.** «Ագաստ» ՍՊ ընկերության ընդդեմ «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության տնօրենի՝ «Ագաստ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումը անվավեր ճանաչելու մասին հայցը, մերժել:

**2.** Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

**3.** Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

**4.** Վճիռը կամովին չկատարելու դեպքում, այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Դատավոր՝ **Աննա Շիլաջյան**

---

*Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am*